

11272



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



«17» 10 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 225 - 24

Նախաձեռնող՝

«Սահակյանշին» ՓԲԸ
ք. Երևան, Արարարյան թաղամաս117/1

Գործունեությունը՝

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղի
13/1 հասցեում ճանապարհի, հենապարտի և թեքահարթակի
կառուցում
ք. Երևան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 225 - 24
« 17 » հոկտեմբերի 2024թ.

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղի 13/1 հասցեում ճանապարհի, հենապարի և թեքահարթակի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝ «Սահակյանշին» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեությունը՝ «Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան

Ներածական մաս. Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն)՝ «Սահակյանշին» ՓԲԸ-ի կողմից Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղի 13/1 հասցեում նախատեսվում է ճանապարհի, հենապարի և թեքահարթակի կառուցում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8 կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթարկվում քաղաքաշինության բնագավառում որպես քաղաքաշինական գործունեության օբյեկտի կառուցում:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան համայնքի կողմից տրամադրված 2024թ. ապրիլի 15-ի N 01/18-01-203-24 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված 0,30981 հա մակերեսով հողամասում՝ (կադաստրային ծածկագիրը՝ N 19102023-01-0275), որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ ընդհանուր օգտագործման, գրանցման իրավունքի տեսակը՝ կառուցապատման իրավունք:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը գտնվում է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղի 13/1 հասցեում: Գործունեության տարածքը գտնվում է մոտակա բնակելի շինություններից՝ 30,4 մ, Մոնթե Մելքոնյան ճանապարհից՝ 236,1 մ, կանաչ գոտուց՝ 65-70 մ, Երևան պարկ ժամանցային վայրից՝ մոտ 250 մետր հեռավորությունների վրա: Գործունեության վայրը սահմանակցում է Ծիծեռնակաբերդի խճուղուն:

Գործունեության շրջանակներում կանաչ գոտու խախտում, ծառաբերքի հատում և չի նախատեսվում:

Համաձայն «Գեոլիթ» ՍՊԸ կողմից կատարված հետազոտության՝ գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Ծիծեռնակաբերդի բարձունքի ուղղությամբ:



արևմտյան եզրամասում և իրենից ներկայացնում է հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք թեք դեյուվիալ լանջ: Ռելիեֆի թեքությունը կազմում է 130°-170°, բացարձակ նիշերը տատանվում են 988-1025 մ սահմաններում:

Ուսումնասիրվող տարածքն աղքատ է գրունտային ջրերից՝ մինչև 50 մ խորությամբ փորված հորատանցքներով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի՝ գտնվում են 80 մետրից խորը հորիզոններում: Տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Ամենամոտ ջրային ռեսուրսը Հրազդան գետն է (1120 մ):

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, բացակայում են:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են չորրորդական ժամանակաշրջանի նեոպլեյստոցեն-ժամանակակից դարակարգերի հրաբխային ապարները՝ բազալտները, որոնց ծածկում են ժամանակակից էլուվիալ-դեյուվիալ առաջացումները:

Տարածքը գտնվում է II սեյսմիկ գոտում:

Նախատեսվող գործունեության տարածքում բնության և (կամ) պատմամշակութային հուշարձաններ, ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ, բնության հուշարձաններ և հատուկ պահպանվող տարածքներ չկան: Հարակից Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը գտնվում է 800 մ, իսկ «Անանուն» սյունաձև բազալտներ երկրաբանական հուշարձանը՝ 1388 մ հեռավորությունների վրա:

Հաշվետվությամբ ներկայացվող գործունեությունը ներառում է թեքահարթակների, հենապատի, ճանապարհի կառուցում:

Կառուցապատման տեխնիկա-տնտեսական ընդհանուր ցուցանիշներ են.

- ✓ հողի մակերես - 3098,1 մ²,
- ✓ ընդհանուր կառուցապատման մակերես - 25443,8 մ²,
- ✓ ավտոկայանատեղի - 588 մեքենա,
- ✓ նոր կառուցվող ճանապարհի ընդհանուր երկարությունը - 550 մ:

Նախատեսվում է հենապատի և թեքահարթակի կառուցում, որի տանիքածածկը հանդիսանալու է նաև ճանապարհ: Ելնելով տարածքի ռելիեֆային բարդ կառուցվածքից՝ այն Ծիծեռնակաբերդի խճուղու և կառուցվող թաղամասի միջև ծառայելու է որպես թեքահարթակներով հենապատ՝ ձևավորելով այլընտրանքային ճանապարհ: Ելնելով ռելիեֆի առանձնահատկություններից՝ շինությունը լինելու է 8-9 հարկանի, որը ներառում է հենապատը, թեքահարթակները՝ ոչ վաճառքի ենթակա ավտոկայանատեղիները և ճանապարհը:

Նախատեսվում է կառուցել ստորգետնյա սպասարկող ճանապարհներ՝ թեքահարթակներով՝ ընդհանուր 10,669.4 մ² մակերեսով: Սպասարկող ճանապարհներն ապահովելու են մեքենաների մուտքը և ելքը:

Ճանապարհի, թեքահարթակի, հենապատի կառուցումը կատարվելու է փուլային (6 փուլ)՝ տարածքում կառուցվող բնակելի շենքերին զուգահեռ (տեխնիկա-տնտեսական ցուցանիշները ներկայացված են Հաշվետվությամբ):

Հենապատի և ստորգետնյա թեքահարթակի կառուցման արդյունքում ձևավորվելու են խոռոչներ, որոնք օգտագործվելու են որպես ստորգետնյա ավտոկայանատեղի: Համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից տրված տեղեկատվության և ճարտարապետահատակագծային առաջադրանքի 9.7 կետի՝ այլ ապահովների, սահմանվում է՝ հողամասի ռելիեֆային առանձնահատկություններից ելնելով տարածքում հնարավոր է կառուցել այլընտրանքային ճանապարհ, ստորգետնյա մուտք - 31,0 մետր խորությամբ/ ավտոկայանատեղի և դրան սպասարկող ճանապարհ-թեքահարթակ:

Ավտոկայանատեղին միակողմանի բաց տարածք է, կառուցվելու է երկաթբետոնե նյութերով, արտաքին ծածկույթը լինելու է բետոնից, հատակը բետոնապլան կլան



մանրահատիկ սվաղով: Լինելով ստորգետնյա կառույց՝ ապահովված է լինելու բոլոր անհրաժեշտ ինժեներական սարքավորումներով՝ օդափոխության, ծխահեռացման, հակահրդեհային ազդանշաններով և հրշեջ ծորակներով: Ամբողջ տարածքն իրարից /ըստ առանձին փուլերի/ անջատվելու են հակահրդեհային և ինքնափակվող դռներով:

Շինությունն ապահովված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու են՝ միանալով գոյություն ունեցող համակարգերին՝ մետաղական խողովակներով:

Ջերմամատակարարում չի նախատեսվում, քանի որ տարածքը միակողմանի բաց է:

Կառույցի տանիքածածկը ծառայելու է որպես երկրորդական այլընտրանքային ճանապարհ: Ճանապարհի ընդհանուր երկարությունը կազմելու է մոտ 550 մ, լայնությունը՝ 4.1 մ առանցքային չափերով:

Նախատեսվող այլընտրանքային ճանապարհի երկարությունն ըստ փուլերի.

- 1-ին փուլ՝ 136 մ,
- 2-րդ փուլ՝ 105 մ,
- 3-րդ փուլ՝ 38 մ,
- 4-րդ փուլ՝ 89 մ,
- 5-րդ փուլ՝ 68.5 մ,
- 6-րդ փուլ՝ 113.5 մ:

Ճանապարհն ասֆալտապատվելու է: Ճանապարհը լինելու է միակողմանի երթևեկելի: Ճանապարհի կառուցումից հետո այն հանձնվելու է համապատասխան գերատեսչությանը /համայնքին/: Նախատեսվող ավտոճանապարհը կառուցվող բնակելի շենքերից ունենալու է 7-8 մ առանցքային չափերով հեռավորություն:

Շինարարական աշխատանքների տևողությունը կազմելու է 36 ամիս:

Նախապատրաստական փուլում կատարվելու են շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում՝ հետիոտն գլխածածկույթով, էլեկտրամատակարարում և ջրամատակարարում, շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում, գիշերային լուսավորվածության ապահովում և այլն: Հիմնական փուլում իրականացվելու է շինարարություն՝ ըստ ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Շինարարական աշխատանքների իրականացման համար յուրաքանչյուր փուլում ձևավորվելու է շինհրապարակ հետևյալ մակերեսներով. 1-ին փուլ՝ 625.6 քմ, 2-րդ փուլ՝ 476.3 քմ, 3-րդ փուլ՝ 230.2 քմ, 4-րդ փուլ՝ 633.15 քմ, 5-րդ փուլ՝ 477.5 քմ, 6-րդ փուլ՝ 735.8 քմ:

Շինարարության ընթացքում տեխնիկա-տրնասպորտային միջոցներից օգտագործվելու են կռաններ (30տ տարողության և այլ մակնիշի), ավտոկռան (KTA-25), բեռնատարներ, աշտարակային վերամբարձ կռունկ, ամբարձիչ, կոմպրեսոր, ավտոբետոնախառնիչ, ավտոբետոնամղիչ, ատացիոնար բետոնապոմպ, գլրոն, այլ գործիքներ և սարքեր:

Շինարարական նյութերից օգտագործվելու են մետաղյա ամրաններ, ավազ, բետոն, պեմզաբլոկ, բարձրորակ ներկեր և այլն:

Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանատեղավայրերում նախատեսվում է բետոնասալերի օգտագործում՝ վառելիքի կամ քայքայիչի հետարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:



Աղմուկի հիմնական աղբյուր է հանդիսանում շինաշխատանքների ժամանակ օգտագործվող շինտեխնիկական (էքսկավատոր, բուլդոզեր և բեռնատարներ): Համաձայն ներկայացված տվյալների՝ աղմուկի մակարդակը (59-62 դԲԱ) գտնվելու է թույլատրելի նորմայի սահմանները:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում, որի համար նախատեսված է 1 հատ անիվների լվացման կետ՝ 150,0 մ² մակերեսով լվացման սարքի միջոցով:

Անիվների լվացումից առաջացած հոսքաջրերն ուղղորդվելու են բիոզուգարան, իսկ շինարարական և անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը պլաստմասսե վերգետնյա խողովակներով, բակային սելավային ջրացանցի միջոցով հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող մետաղական պարզարան: Պարզեցված ջուրը (մեխանիկական նստեցում) կօգտագործվի շինարարական հրապարակի մոտ 220 մ² մակերեսով տարածքի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Տանիքածածկը ծառայելու է որպես երկրորդական այլընտրանքային ճանապարհ: Մինչև ճանապարհի կառուցման աշխատանքները, շինության տանիքածածկի վրա իրականացվելու են ջրա- և ջերմամեկուսիչ աշխատանքներ:

Շինարարության ընթացքում էլեկտրամատակարարումը կատարվելու է համաձայն՝ «ՀԷՏ» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի՝ 250 կՎԱ, 10կվ լարման ենթակայանից: Էլեկտրահաղորդման գծի ուղեգիծը նախապես համաձայնեցվելու է շահագրգիռ կազմակերպությունների հետ:

Աշխատողներն օգտվելու են գոյություն ունեցող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերից: Նշված համակարգերը կառուցվել են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի հիման վրա: Ջրամատակարարումը կատարվելու է Փափագյան 2-րդ նրբ. Կովկասյան ՕՀՋ- 44 ից, Մ. Մելքոնյան խճուղուն զուգահեռ անցնող D=500 մմ տրամագծի ջրագծից:

Աշխատողների կոմունալ-կենցաղային պայմանները կապահովվեն ժամանակավոր կառույցների տեղադրմամբ՝ ապահովվելով շինհրապարակում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմանները և այլն:

Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը կկազմի 742.4 մ³/շին.ժամ կամ 2.9 մ³/օր:

Գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու է խորքային հորի ջուրը, որի համար առկա է շրջակա միջավայրի նախարարության կողմից տրված ջրօգտագործման թույլտվությունը:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախառնուրդի պատրաստում չի նախատեսվում:

Համաձայն նախագծային լուծումների՝ կառուցապատման ժամանակ կատարվելու են հողային աշխատանքներ՝ 96041.1 մ³ ծավալով, որից 19208.2 մ³ հողային զանգվածն օգտագործվելու է տեղում, իսկ 76832.9 մ³ հողային զանգվածը հեռացվելու է քաղաքային թափոնատեղ՝ Երևանի քաղաքապետարանի կողմից տրված շինթույլտվության պահանջներին համաձայն: Հողային զանգվածն առաջանալու է հիմքերի փորման /ներառում է նաև ստորգետնյա աշխատանքները/, ջրահեռացման համակարգերի անցկացման աշխատանքներից: Համաձայն «Գեոլիթ» ՍՊԸ-ի կողմից կատարված ուսումնասիրությունների՝ տարածքում բացակայում է հողաբուսաշերտը:

Շինարարության ընթացքում առաջանալու են շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով՝ մոտ 624 մ³ ծավալով: Շինաղբի կուտակումը կատարվելու է շինհրապարակում նախատեսված վայրում՝ պարկերի մեջ՝ չգերազանցելով նախատեսված



բարձրության նորմերը: Շինհրապարակում նախատեսված է շինարարական աղբի պահման տարածքը:

Կենցաղային աղբը կազմելու է 10800 կգ/տարի: Կենցաղային աղբի կուտակման համար օգտագործվելու են շինհրապարակում գոյություն ունեցող 200 լիտր տարողության 6-7 հատ մետաղյա աղբամաններ:

Համաձայն տեղեկատվության՝ շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող գրունտային հողերը և շինարարական աղբը տեղափոխվելու է Էրեբունի վարչական շրջանի Նուբարաշենի խճուղի 4 հասցեում գտնվող տարածք, իսկ խոշոր եզրաչափերի թափոնները տեղակայվելու են Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասին հարող նախկին քարհանքի անօգտագործելի խորշերի տարածքում:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, տարածքի բարեկարգում, ճանապարհի ասֆալտապատում: Ծիծեռնակաբերդի խճուղու և այլընտրանքային ճանապարհի միջև կառուցվելու է մոտ 380.0 քմ մակերեսով գազոնապատ, թփերով բաժանարար պատ՝ մինչև 1 մ լայնությամբ, ճանապարհի երկայնքով՝ մասնակի ընդհատումներով՝ մինչև 580 մ:

Կանաչապատման նպատակով նախատեսվող բուսահողը բերվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության պահանջներով՝ համապատասխան թույլտվություններ և համաձայնություններ ստանալուց հետո:

Կանաչ տարածքի ոռոգումը կատարվելու է գոյություն ունեցող քաղաքային ոռոգման ցանցից Ф50 պոլիէթիլենային խողովակներով՝ կաթիլային եղանակով:

Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ, որոնք կապված են կառուցապատման ընթացքում օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների աղտոտման, կենսաբազմազանության, մարդու առողջության պահպանման, ինչպես նաև տրանսպորտային միջոցների և սարքավորումների աշխատելու ընթացքում հողային և ջրային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի՝ յուղերի հնարավոր ներթափանցման, թափոնների կառավարման հետ:

Նախատեսվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ (օդային ավազան, ջրային և հողային ռեսուրսներ, կենսաբազմազանություն, աղմուկ, թրթռում, թափոն, արտակարգ իրավիճակներ և աշխատանքի անվտանգություն և այլն):

Պատճառաբանական մաս. Համաձայն Հաշվետվության՝ ճանապարհը, հենապատը և թեքահարթակը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները շինարարության փուլում լինելու են կառավարելի և կրելու են կարճատև բնույթ:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Երևանի քաղաքապետարանը, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանը: Հաշվետվությունը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել է երկու համարյալ քննարկում, նախատեսվող գործունեությունը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:



Փորձաքննական պահանջներ

1. Նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը իրավասու մարմինների կողմից ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հետևել Հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, դրանց չբավարարման դեպքում նախատեսել հավելյալ միջոցառումներ:
3. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:
4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
5. Բետոնի տեղափոխումն իրականացնել Հաշվետվությամբ նախատեսված ձևով՝ բացառելով շինհրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
6. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Սահակյան շին» ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղի 13/1 հասցեում նախատեսվող ճանապարհի, հենապատի և թեքահարթակի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Էսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Կերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Աստղիկ Վարդանյան